ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հաղորդակցական քերականության առանձնահատկությունները և ուսանելի օրինակներ

Կատարող՝ Սեդա Նազարյան

Ուսումնական հաստատություն՝ Քաղաք Մասիս, Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Քնարիկ Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն_____3
Հիմնական բովանդակությունը_____4
Եզրակացություն_____14
Օգտագործված գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ_____ 15

Ներածություն

Ուսուցչի և աշակերտի համագործակցությունն ուսումնական միջավայրում, նրանց համատեղ գործունեությունը միտված է ուսումնական նպատակների իրականացմանը: Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար անհրաժեշտ է կիրառել տարբեր մեթոդներ, որոնք պետք է ընտրվեն ճիշտ և լինեն կիրառելի: Շատ կարևոր է սովորողի ինքնուրույն գործունեությունը, նրա անմիջական ակտիվ մասնակցությունը: Արդյունքում հստակ սահմանվում է դասի նպատակը, ապահովվում է սովորելու շահագրգռվածությունը, մատուցվում է տեղեկատվություն, որը դառնում է հետաքրքիր և ավելի ըմբռնելի: Աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որևե գործընթացի, նրա համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար, ձեռք է բերում համագործակցային և հաղորդակցական կարողություններ, նյութի յուրացման ընթացքում հնարավորություն է ստանում ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը: Ի վերջո՝ ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Առաջնորդվելով այս առավելություններով և դասը վարելով ԽԻԿ համակարգով՝ ես որոշեցի կազմակերպել բաց դաս, որի թեման էր ‘Passe՛ Compose՛: Քերականական այս բարդ նյութն այնքան էլ հեշտ չէ մատուցել այնպես, որ հասանելի լինի յուրաքանչյուր աշակերտի լիովին ընկալմանը: Այն լիարժեք յուրացնելու համար պետք է տիրապետել քերականական տարբեր գիտելիքների, ինչպիսիք են avoir և être բայերի խոնարհումը, հարակատար դերբայի կազմությունը, որն ի դեպ չի համապատասխանում այդ տարիքի աշակերտների մայրենի լեզվից ունեցած գիտելիքներին:

Ուստի նյութն առավել շահեկան մատուցելու նպատակով այն վերածվեց հեքիաթի:

Դասի նպատակներն էին.

- սովորողի բառապաշարային կարողությունների ակտիվ ընդլայնումը,
- նոր քերականական ժամանակի հետ ծանոթացումն ու հեշտությամբ հասկանալու քերականական բարդությունները,
- հաղորդակցային-խաղարկային ունակությունների զարգացումը։

Դասի սկզբում կիրառվեց խթանման փուլի մշտական մեթոդներից մեկը՝ մտքերի տարափ կամ մտագրոհ, որի միջոցով բացահայտվում են նոր նյութի վերաբերյալ աշակերտի ունեցած գիտելիքները, ձևավորվում շահագրգռվածություն և ակտիվ մասնակցություն դասապրոցեսին։

Նախապես հանձնարարված էր սովորել 'passé composé'-ի սահմանումը, կազմության առանձնահակությունները, avoir և être բայերի ներկա ժամանակների խոնարհումը, 12 բայերը, որոնք խոնարհվում են être-ով և մի շարք բայերի հարակատար դերբայները։

Հարց-պատասխանի միջոցով ընդհանուր ներկայացնելով Passé composé-ն՝ խթանում փուլից անցում կատարեցինք իմաստի ընկալման փուլ։

Այս փուլում ես օգտագործել եմ համակարգիչը, որով ցուցադրվել է պրեզենտացիա՝ նկարներ, նոր նյութի քերականական գործողություններ, օրինակ՝ հարակատար դերբայների կազմության ձևը, ինչպես նաև նյութին համընթաց վարժություններ, որոնք մեկընդմեջ կատարում էին աշակերտները։ Դրան զուգահեռ նախապես սովորած դերախաղով հանդես եկան որոշ աշակերտներ՝ թագավորի, արքայազնի ու նրա 12 համախոհների կերպարներով։ Հեքիաթի ընթացքում կային նաև այլ վարժանքներ. փակել աչքերը, թաքցրած բայը կռահել, վերադասավորել խառնված տառերով բայերը, գտնել հարակատարը և այլն։ Դիտակտիկ նյութերից էին երեխաների կողմից նկարված կառքերը, որոնք ևս հեքիաթի տարրերից էին։

Կշռադատման փուլում ամփոփեցինք թեման՝ ևս մեկ անգամ հանրագումարի բերելով ստացած գիտելիքները, պատասխանելով ամփոփիչ հարցերին և կազմելով կարճ նախադասություններ 'Passé Composé' ժամանակով։ Երեխաները խրախուսվեցին ակտիվ մասնակցության համար և իհարկե գնահատվեցին բարձր գնահատականներով։

Որպես տնային առաջադրանք տրվեց խոնարհել 12 բայերը être-ով և avoir-ով խոնարհվող 5

բայ գործածել նախադասությունների մեջ։

Ստորև ներկայացնում եմ հեքիաթի ողջ ընթացքը։



Հնագույն ժամանակներում կար մի հեքիաթային թագավորություն՝ Ֆրանկոբայերի թագավուրությունը։ Այնտեղ ապրում էին բոլոր ֆրանսերեն բայերը։ Այս երկիրը ղեկավարում էր մի թագավոր, որի անունն էր **Avoir:**

Խիստ էր այդ թագավորը՝ փառասեր և հզոր։ Նա շատ էր սիրում, երբ իրեն փառաբանում էին։

Պրեզենտացիային զուգահեռ աշակերտները կատարում էին դերերը։

Մի անգամ թագավորը հրաման տվեց.

-Je vous ordonne à tous: Quand vous voudrez vous présenter, vous devez d'abord prononcer mon nom et ensuite le vôtre. Si quelqu'un n'obéisse, il sera guillotiné!

Բնակիչներին ոչինչ չէր մնում, քան հնազանդվել: Բայց այդ աստիճան թագավորից կախված չլինելու ցանկությունը բերեց նրան, որ բնակիչները ոչ ամբողջությամբ էին արտաբերում նրա անունը:

Հեքիաթին զուգընթաց ուսուցչուհին պարբերաբար հարցեր է ուղղում դասարանին: Այստեղ նա հարցնում է avoir բայի խոնարհումը ներկա ժամանակով:

Առաջացան 3 խմբավորումներ՝ կախված նրանից, թե ինչպես էին վերաբերվում թագավորին:

Ուսուցիչը նախապես աշակերտների երեք շարքերը անվանել է որպես ֆրանսերենի բայերի երեք խմբեր:

Առաջին շարքի ներկայացուցիչները իրենց անունն արտաբերում էին զարմանքով, վերջում լսվում էր **Է** հնչյունը (perler, chanter, donner, voler, danser, jouer...):

Երկրորդ խմբի բայերը արտաբերում էին իրենց անունները ծաղրանքով, վերջում լսվում էր **Ի** հնչյունը (finir, grandir, rougir, réussir, obéir, choisir, remplir...):

Երրորդ խմբում այն բայերին էին որոնք, որոնք վախից փոխում էին իրենց անվան ձևերը (mettre-mis, écrire-écrit, faire-fait, dire-dit, lire-lu, devoir-du, pouvoir-pu...):



Այստեղ ուսուցիչը դիմում է աշակերտներին:

_Quels sont ces verbes? Dites-moi! ...

Բայց իզուր չէին ասում, որ **Avoir**-ը հզոր թագավոր էր: Ամենուր նա ուներ իր մարդիկ, որոնք թագավորին հայտնում էին այն ամենը, ինչ լսում ու իմանում էին:

Etre արքայազնը չհասցրեց որևէ բան ձեռնարկել, երբ նրան բռնեցին և բանտարկեցին:

Թագավորն ուզում էր ոչնչացնել եղբորը, բայց որոշ ժամանակ անցավ, և նա մեղմացրեց պատիժը: Նա որոշեց, որ եղբայրը չպետք է իր կողքին ապրի, կանչեց նրան և ասաց.

_Je te rends ta vie, mais je te chasse du pays. Je te donne une terre au nord, tu peux y gouverner. Reunis tes complices et partez d'ici! Les carosses seront prêtes à 7 heures. Et retiens bien, si tu veux me parler, tu dois toi-même, comme chaque habitant, prononcer mon nom le premier!

Աշակերտներին նախապես հանձնարարվել էր նկարել 7 կառք: Դրանք տեղադրվեցին գրատախտակի լայնությամբ, իսկ նրանց 2 կողմերում ամրացվեցին 12 բայերը և être բայը:



Պրեզենտացիայում պարբերաբար ներկայացվում էին վարժություններ, օրինակ՝

• ներկա ժամանակը փոխարինել անցյալով.

elle chante - …

nous patinons - ...

J'arrose - …

tu travailles - ...

(elles lugent - …)

je mange - …

nous souhaitons - …

il dessine - …

vous faites - …

ils écrivent - …

· թարգմանել նախադասությունները.

դու նկարում ես - …

մենք խաղում ենք - …

դուք նայում եք - …

երեխաները կարդում են - …

ես գրում եմ - …

նա ցույց է տալիս - …

դու տալիս ես - …

· ընտրել ճիշտ պատասխանը

Pendant les vacances Pierre … du ski.

a) faire b) a fait c) a fais d) à fait

Hier j' … la télé toute la journée.

a) a regardé b) est regardé c) ai regardé d) regarde

Les élèves … se récit pendant la leçon.

a) ont lu b) a lu c) ont lit d) lisent

Qu'est-ce que vous … dans votre lettre.

a) a écrit b) avons écrit c) écrit d) avez écrit

Marie … les fleurs à sa mère.

a) à donner b) a donner c) est donné d) a donné

A cette fête nous … beaucoup de chansons.

a) avait chanté b) avons chanté c) avant chanter d) avez chante

Հրամանից հետո ամեն ինչ լավ էր ընթանում: Բնակիչները չեին մոռանում իրենց անունից առաց հնչեցնել **Avoir** թագավորի անունը, և վերջինս գոհ էր: Սակայն թագավորը ուներ կրտսեր մի եղբայր, որի անունն էր **Etre**:

Շատ էր նախանձում արքայազնը իր ավագ եղբորը. ինչու՞ ինքը չլիներ նրա տեղը: Նա երկար տանջվեց, մտածեց, թե ինչ կարելի է անել, և վերջապես իր շուջը հավաքեց որոշ համախոհների (*12 բայեր*), որոնց օգնությամբ պետք է իշխանությունից զրկեր **Avoir**-ին:

Եվ ահա հաջորդ օրը բոլորը հավաքվեցին կառքերի մոտ: Առաջին կառքը նստեց **Etre** արքայազնը, երկրորդը՝ **Aller-Venir**, երրորդը՝ **Entrer-Sortir**, չորրորդը՝ **Arriver - Partir**, հինգերորդը՝ **Naître - Mourir**, վեցերորդը՝ **Tomber-Rester**, և վերջինը՝ **Monter-Descendre**.

Որոշ ժամանակ գնալուց հետո նրանք որոշեցին կանգ առնել, հանգստանալ:

Ոմանք մնացին կառքերում, մյուսները գնացին զբոսնելու:



Այստեղ ուսուցիչը հրահանգում է աշակերտներին փակել աչքերը, հեռացնում է կառքերի մոտից որոշ բայերի անուններ, ապա ասում է.

_Ouvrez les yeux et dites, qui n'est pas là?

Աշակերտները կռահում են բացակա բայերի անունները:

Պետք է ասել, որ արքայազնը շատ տաղանդավոր էր: Մինչ նրանք ճանապարհին էին, նա մի երգ հորինեց իր և իր ընկերների մասին:

Այստեղ աշակերտը սկսում է երգել.

Il y a quelques mots français

Qui au passé composé

Se conjuguent avec le <u>être.</u>

Je veux les nommer maintenant.

Ecuotez attentivement.

Aller-venir, arriver-partir,

Entrer-sortir, naître-mourir,

Tomber-rester, descendre-monter.

Որոշ ժամանակ անց կառքերը մոտեցան նոր բնակավայրին: Ամենքը գնացին իրենց տներով:

Այդ ընթացքում **Avoir**-ը հրաման տվեց տպագրել թերթերում բոլոր դավաճանների անունները: Սակայն տպագրողը նրանց ծանոթն էր, և որոշում է անունների տառերի տեղերը փոխել, որ չճանաչեն նրանց:

Այստեղ կատարվում է հերթական վարժությունը. անհրաժեշտ էր վերադասավորել տառերը:

rreavir --- arriver

lealr --- aller

ortmen --- monter

bormet --- tomber

tisror --- sortir

nervi --- venir

traein --- naitre

rarpit --- partir

tersre --- rester

roumir --- mourir

renret --- entrer

cesedrnde --- descendre

Հաջորդ վարժությունը հետևյալն էր. գտնել առաջին խմբի բայերը: Այնուհետև հանձնարարվեց գտնել 12 բայերի հարակատար դերբայները: Իսկ վերջին վարժությունը «Հրաշքների դաշտ» խաղն էր. թաքցված տառերը կռահելով՝ վերականգնել 12 բայերը:



Merci à tout le monde qui m'a écouté *խոսքերով էլ ուսուցչուհին եզրափակեց հեքիաթը:*

Դասի ամփոփումը տեղի ունեցավ հարց-պատասխանի միջոցով.

-Quand a eu lieu cette histoire? …

-Qui était le roi de ces temps? …

-Qu'est-ce qu'il a dit à ses habitants? …

-Comment ont prononce' les habitants le nom du roi? …

-Combien de groupes ont formé les habitants? …

-Quel groupe n'a presque changé son nom? …

-Comment s'appellent les verbes ***être*** *et* ***avoir****? …*

-Quelles sont les 12 verbes qui se conjuguent avec être? …

-Quels sont les participes passés de ces verbes? …

Եզրակացություն

Passe´ Compose´ *ժամանակաձևի ուսուցումն առավել դյուրին և ընկալելի դարձավ աշակերտների համար: Արդարացվեցին մեր առջև դրված բոլոր խնդիրներն ու նպատակները: Արդյունքը բավարար էր և՛ աշակերտների և՛ ինձ համար:*

Նմանատիպ բաց դասերի և միջոցառումների անցկացումը խթանում է նույնիսկ ամենաթույլ աշակերտի կողմից գիտելիքի դյուրին ընկալմանն ու ապահովում նրա ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին:

Օգտագործված գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ

1. И.Н. Попова, Ж.А. Казакова – Грамматика французского языка
2. Le Bon Usage – Maurice Grévisse
3. Le Bescherelle – La grammaire pour tous
4. Տարբեր համացանցային կայքեր